The Only Armenian paper in the U. S.

ՄՇԱԿ

Advertise In It.

VOL. I.—NO. 25.] Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 25 WEST HOBOKEN, N. J. DECEMBER 14, 1889.] ՈՒԷՍԹ ՀՈԳՈՒԲԸՆ, ԴԵԿՏ. 14 1889 PRICE TWO CENTS.] ԳԻՆ ԵՐԿՈՒ ՍԷՆԹ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՍՈՒԼԹԱՆԻ ՀԱՐԷՄԷՆ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ԱՌՕՐԵԱՑ ԿԵՆԱՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ

Այս է վերնագիրը մեր Թրքախօս Թղթակցի գրած վերջի նամակին որուն մէջ կ'ըսէ։

«Սուլթաններու հանապազօրեայ կեանքը չի նմանիր սովորական մարդկանց կեանքի, ասոնք ունին իրենց յատուկ վարք և բարք որոյ ճիշտ պատմութիւնն քիչ անգամ տեսնուած է տպագրեալ։ սա պատճառաւ որ կարծեմ՝ մինչև այսօր ինծմէ զատ ոչ ոք համաձակած էր գրել թէ իրօք ինչպէս կ'անցուցանեն իրենց օրեր թուրք խալիֆաներ։ Նաև շատ քիչեր երբէք մուտ գտած են այս պալատ կոչուած բանտը, որովհետև ինչպէս գիտէք խստիւ արգիլուած է օտարականաց և ընդհանուր քրիստոնէից պալատի մէջ բնակիլ, աշխատիլ և տեսնել ամէն ինչ։ Արդ՝ քանի որ տուիթ կը ներկայանայ ինձ և խոստացած եմ գրել ձեզ ամէն շաբթու, իբրև հետաքրքրական ինչ պիտի նկարագրեմ արդի խալիֆայի ամէն օրեայ կեանքը, որուն ճշտութեան կրնաք վստահ լինիլ, զի ոչ թէ միայն ականատես եմ բոլոր պարագայից, այլ և Սուլթանի փափաքանաց ճշտիւ կատարման միջոցներն ինձ կը կեդրոնանան։ անծանօթ չէ ձեզ։

Նախ ծանուցանել հարկ է թէ Սուլթան Համիտի օրերն կէս օրէ վերջ ժամը ութի կամ տասնի ժամանակներ կըսկսին։ արդարև բոլոր արքայից օրերն առաւօտէն հաշուել կարելի չէ, որովհետև պալատիս մէջ Սուլթանական օրը ինչպէս որ ըսի՝ կէս օրէ վերջ, կամ երեկոյեան ճաշէն քանի մը ժամ վերջ կըսկսի, որուն պատճառն պիտի գրեմ քիչ վերջ։

Երևակայեցէք ուրեմն թէ Արեգակը մարը մտնելէ երկու ժամ վերջն է ժամանակը, և Սուլթանն կը պատրաստուի կանանոց մտնել՝ գիշերը անցուցանելու համար։ Բընականաբար այն ժամերուն Սուլթանն փոքր ինչ արբեալ (չաքը քէֆ) է, առանձինն քայլ առնելու անկարող, հետևապէս պալատականի մը բազուկն բռնած կը մտնի՝ կանանոցը այրանոցն բաժնած նեղ անցքին մէջ ուր երկու ներքինի կը դիմաւորեն զինքը և փոքր ինչ առաջ տանելէ վերջ կը յանձնեն Նորին վեհափառութեանը օրիորդաց, որոց թիւը արդի պարագայից մէջ 141, իբրաքանչիւրն Սուլթանի կանանց միոյն կողմանէ յատկապէս խրկուած, որպէսզի առաջնորդեն զինքը 14 կանանց միջէ որու սենեակն որ կամի անցուցանել գիշերն։ Հոս կըսկսի Սուլթանի կենաց ամենէ հետաքրքիր մասն, որ ծաղրելի իսկ է, զի վեհափառն իւր արբեալ վիճակին մէջ պիտի մատչի աղջկանց իրաքանչիւրի և հարցնէ իւր թիւը, այսինքն թէ քանիերրորդ խաթունի կը վերաբերի (Սուլթաններու կանայք Գաւազն կը կոչուին և թիւեր կը կրեն, օրինակի համար պիրինճի Գաւազն, իքինճի Գաւազն, իւչիւնճի Գաւազն Եայլն) այն 14 աղջկունք իրենց ուղղեալ հարցմանց պատասխանելէ վերջ՝ երբ Սուլթանն կ'որոշէ թէ քանի երորդ թիւ կնոջ սենեակն կուզէ երթալ, աղջիկը փոքր ինչ կը ծռէ մէջքը որպէսզի վեհափառն հեծնէ, և այս կերպով հեծեալ կերթայ կնոջ ննջարանի դուռն որն՝ 99 առ 100 գոց կը գտնէ Սուլթանն, որուն պատճառն է հետևեալն։

Կանայք իրենէ նախանձ և դիւրագգած լինելով՝ Սուլթանին իսկ չենն ներեր որ անպատիժ մնայ, երբ կը լսէին զիրենք ու կը խարէն, ուրիշի մը հետ բաժնելով իւր սէրը։ «Կամ սիրէ զիս միայն, կամ բոլորովին թող զիս» այս է Սուլթանի 14 կանանց իրաքանչիւրի բողոքն։ բողոք մը զոր ուղղեալ է պալատի չորս պատերուն, անլսելի Սուլթանի մեծ և լայնատարած ականջներուն։ Սուլթանն և զինքը կրող ջիկն կը զարնեն դուռը և կը պաղատին որ չը մերժուին, խոստովանելով թէ միշտ հոս պիտի գայ։ Նորին վեհափառութիւնը։ թէ ուրիշ կին չի սիրեր նա և թէ բոլորն ալ ատելի են իրեն բացի . . . և վերջապէս տիկինն կը բանայ դուռը և կըսկսի քիչ շատ տարբերութեամբ հետևեալ խօսքերն ուղղել իւր տիրոջ, իւր ամուսնոյն, Ղազի Սուլթան Համիտի։ «Զեմ ուզեր, գնա՛ ուր որ անցուցիր երեկ գիշեր. ես գիտեմ թէ դուն զիս չես սիրեր, ահա ութը օրվ ի վեր է սենեակս մտած չես, ուրիշին ընծայ տուիր՝ ինծի չը տուիր, գնա՛ ուրեմն և թող զիս որ մեռնիմ, արդէն Սուլթանի կին լինելէ լաւագոյն է մահը, ոչ գնա՛ կորսուէ՛ (տէֆ օլ, գահր օլսուն)։ Այս պարագայիս մէջ կինը կուլայ՝ Սուլթանն կը հայհոյէ և աղջկունք կըզրօսնուն բարձրաձայն խնդալով և ծափահարելով։ քանի մը վայրկեան վերջ ամէն ինչ իւր տեղը գտած է և հրաման կը տրուի աղջկանց որ պարեն, երգեն և նուագեն։ Ցայտնի է թէ թրքաց պալատին մէջ մէկ քանի երկոտասնեակ երգչուհիք, պարուհիք և նուագածուհիք կան որոց պաշտօնն է Սուլթանն զրօսցնել երբ սականանոցի մէջ իւր կիներով միայն բաղկացը մէջ կը գտնուի։ Այն աղջկունք, ինչպէս որ բոլոր պալատի կանայք, գրեթէ կիսամերկ կը շրջին։ Իրենց բազուկներն ամբողջովին, իրենց սրունքներն բոլորովին և սրունքներու մեծ մասն մերկ լինիլ հարկ է Սուլթանի ներկայանալու վիճակի մէջ գտնուելու համար, որպէսզի մարդարէի ներկայացուցիչն հրապուրուի, զգաստի և վայելչ աշխարհային բարիքներն (իհսան) զոր տրուած է իրեն յերկնից։ Կրնաք երևակայել թէ սաքա՝ աղջկունք երբ կը շարժին՝ աչքերը շլացնող կազային և մեղրամոմերու լոյսերու մէջ՝ տեսարանը հմայելի կըլլայ։ Ընդհանրապէս խօսելով վեց աղջիկ կը պարէ Եւրոպական ոճով։ վեց աղջիկ կ'նուագեն նոյն եղանակաւ, իսկ վերջը կըսկսի թրքական պարերն և երգերն որոց բոլորն ալ «քեօչէկ հավասը» կոչուած ներն են։ Մինչդեռ սաքա իրենց պաշտօնն կը կատարեն, ուրիշ կիսամերկ աղջկունք կը պատրաստեն օղի և ուտելիք (մէզէ) Սուլթանի և իւր այդ օրուան կնոջ համար ճաշակելի, բայց իրողութիւն մ'է որ երբ այս սղաստուհի աղջկունք Սուլթանի ննջարանն կը մտնեն, ամբողջ սենեակը տակնի վրայ ըլլալ կըսկսի, որովհետև Սուլթանն՝ օղիի ազդեցութեան ներքև բոլոր աղջկանց վրայ կը յարձակի, մին համբուրելով՝ և միւսն . . . . Երբ Սուլթանի կինն կը միջամտէ արգիլել այն խայտառակութիւն, վէճ մ'է որ կըսկսի Սուլթանի և իւր կընոջ մէջ տեղ։ առաջինն պնդելով թէ ինքը տէրն է պալատին ու անոր պարունակութեանց և թէ ազատ է իւր ուզածը ընել, որուն կը պատասխանէ կինն թէ գնա՛ ուրիշ սենեկի մէջ ըրէ ինչ որ կուզես, այլ իմ սենեակս և ներկայութեանս չեմ թողուր որ խայտառակութիւն ընես։ Իրաց այս վիճակին մէջ բոլոր կանայք միաբերան կը խօսին ուրիշ սենեակներու մէջ, վեհափառի միւս կիներն լրտեսներու միջոցաւ տեղեկութիւն կըստանան անցած դէպքերու վերայ, սմանք ուրախ կըլլան և սմանք տրտում, այլ բոլորն ալ քիչ թէ շատ կըզրօսնուն մինչև այն տարուածն ալ վերջանայ, յորմէ հետէ կէս ժամի չափ ամէն ինչ լռութիւն է . . . .»

ԹՐՔԱՏԵԱՑՆ

Մնացեալն գալող անգամ

ԴԱՆԱԿՆ ՀԱՍԵՐ Է ՈՍԿՈՐԻՆ

Երկչոտ Թրքին վատ սուսերներ,
Ջախջախեցին մեր ոսկորներ,
Բաւէ սարսուռ ապրինք Հայե՛ր,
Դանակն հասեր է ոսկորին։

Օ՜ն երթանք, Հայն խոցի մէջ է,
Ծեր և կնիկ կոծի մէջ է,
Հայաստանն բոցի մէջ է,
Դանակն հասեր է ոսկորին։

Ցրանկին երթանք մեզ պիտ ասէ,
Ռուսին բանը արդէն վատ է,
Թուրքն ալ մուրդատ անհաստատ է,
Դանակն հասեր է ոսկորին։

Ափսո՜ս եղարք մեր Հայ անուան,
Ալ չը վայեր մնալ անբան,
Առնենք զէնք սուր սուին հրացան,
Դանակն հասեր է ոսկորին։

Բաւէ քանդուին սրբոց խորան,
Վանքն ու ժամերն ըլլան վերան,
Մեր կարիճներն ի զուր մեռան,
Դանակն հասեր է ոսկորին։

Ուստի ժամ է խղդել այն շան,
Տնկել մահկի տեղ խաչ նշան,
Ոսկոս ընել Մէհմէտն Աշան,
Դանակն հասեր է ոսկորին։

Հերիք է մեզ օրէնք ըլլան,
Սուրբ գրոց տեղ Թրքաց գիրքան,
Որք չերբիով մեզ վճիռ տան,
Դանակն հասեր է ոսկորին։

Ցիշենք անցեալն տեսնենք ներկայն
Որ ներկայիս մէջ կ'ապրի Հայն,
Ասկից ետոյ տանք ազատութեան,
Դանակն հասեր է ոսկորին։

Հայաստանի մեր եղբայրներ,
Ցայսն է դրած ձեզի Հայեր,
Նոր երկրի Հայ գաղթականներ,
Դանակն հասեր է ոսկորին։

Աղատասէր ո՛ եղբայրներ,
Վատագ գնատակ տանք գինուորներ,
Զ'ըլլանք վատակ և անտեր,
Դանակն հասեր է ոսկորին։

Հայ գաղթականք ամեն աման,
Ելնենք ոտքի ժամ է զաման,
Ջնջենք թուրքն իւր սուտ իման,
Դանակն հասեր է ոսկորին։

Ատուած վկայ եթէ ուզենք,
Կրնանք առնել վահան և զէնք,
Թուրքն ու քիւրտը շուտ կը բզենք,
Դանակն հասեր է ոսկորին։

ՓԱԽՍՏԱԿԱՆ

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՔ

ՆԻՒԵՈՐՔ, Դեկտ. 12

Հետևեալն ինձ Զընկուշէ հաղորդած են որն աւելորդ չեմ սեպեր իմացնել ձերընթերցողաց։

Վերջերս յիշեալ տասնի Հայոց ազգապատիւ մի մօտիկ ազգականն, 17 տարեկան գեղադէմ մի պատանի որոյ հայրն ու եղբայրը քանի մը տարի առաջ սպաննուած էին քուրտերէ՝ Շիրայի գիւղերուն մէջ — ուզելով իւր բաղդն չինել՝ տեղւոյն Թուրք հայտնաներէ Կիւլլի պէկ անուն անձին կը դիմէ՝ նախ՝ փոխառնութիւն մը խնդրելու։ Փիւլի պէկ կընդունի առաջարկն, պայմանաւ որ պատանին յանձն առնէ կատաղի դաղանին կիրքը յագեցնել։ Համեստ տղան վեհանձնութեամբ կը մերժէ՝ պատասխանելով մեկնիլ։ սակայն ըղձրշ տաճիկը զայն չի թողուր ու կը ջանայ նախ համոզել քաղցրութեամբ, և յետոյ կը փորձէ բռնութեամբ յագեցնել զիւր գազանային կիրք։ Կռիւը կսկսի ու ծառայքներս կը մտնեն։ Կիւլլի, որ զաւակայ տէր անձ մ'է, սակայն կը թողու պատանին, այլ յոյսն չ'կտրեր, ուստի կոչթայ մուտիրին օգնութիւնն խնդրելու՝ պայմանաւ որ հաճոյքն բաժնեն։ Հ. մաձայնութիւնն կը գոյանայ, և վրանն կը պատրաստուի։ Նոյն գիշեր մուտիրի հրամ նաև պատանին կը ձերբակալուի յանկարծ ու կը բանտարկուի։ Հայոց ազգապետն լսելով զայս կրակ կը կտրի ու կերթայ մուտիրի քով։ «Ես բան մը չեմ գիտեր, կըպատասխանէ արգաւութեան պաշտօնեան, այս գիշեր բանտը պիտի մնայ անպատճառ, և վաղը կը տեսնենք դառը»։ Ազգապետի զուր կաշխատի ազատել բանտարկեալն, ուստի գժուարաւ հրամն կառնու երկու մարդ դնելնոյն գիշերխզճ տղային քով։ Ազգապետն տուն դառնալով իւր չափահաս մի տղան և մի ուրիշ երիտասարդ կը ղրկէ բանտարկելոյն քով։ Մինչ կէս գիշեր բանտարկեալն ու իւր պահապանք արթուն կը հսկեն ու այնուհետև մը բաժնել կըսին։ Այս պահուս Միւտիրն արբեալ ներս կը մտնէ մերկ դաշոյն մ'ի ձեռին, ու կարթնցնէ բանտարկեալն՝ հրամայելով հետևիլ իրեն։ պատանին կը մերժէ ու կարթնցուցնէ ագգապետի տղան որն ելնելուն պէս կռիւն կսկսի ու զինուորներն ներս մտնելով կը հաստատեն խաղաղութիւնն։ Ազգապետի տղան արիւնաթաթաւ տուն կը տարուի որուն կը հետևի նաև բանտարկեալն։ Երբ ազգապետն կը տեսնէ իւր զաւկին վիճակը ու կը լսէ խընդիրն՝ աչքերն կը դառնան, և այլ ինչ ընելու անկարող լինելով՝ հետևեալ առտու Ջերմուկ կերթայ՝ որ 20 ժամու չափ հեռի է Տիգրանակերտէ, դատ բանալու համար։

Դատը կը բացուի, այլ արդիւնքն ոչինչ, ինչպէս բնական է երևակայել։

Ահաւասիկ այս է մեր ազգայնոց վիճակն ի տուն հայրենի։ Մեր եղբայրներն սարսպեալ են հոն ո՛չ միայն դեղեցիկ սեռին, այլ և երիտասարդաց ու պատանեկաց պատիւն պաշտպանել բռնաբարումէ . . . . Տէր Աստուած, ինչ՞ վայրագութիւն։ Կ՞այ արդեօք թուրքերէն աւելի բնութեան օրէնքին հակառակ գործող մի անզգամ ժողովուրդ։

Ն. Հ. Զ.

Նկատելով որ շատեր ոտանաւորներ կը զրկեն մեզ ի հրատարակութիւն և նկատելով որ բաւական տեղ չունինք Սուրհանդակի մէջ բանաստեղծութեանց յատկացնելու, ուստի հետևեալ կարգադրութիւնն ըրած ենք Յառաջիկայ յունվարէն, տեսը առ տեսը, ազգային երգերու հատուածոյ մը պիտի սկսինք հրատարակել, որոյ մէջ պիտի դնենք սեզրկուած ամէն ընտիր բանաստեղծութիւն, եթէ մէն մի տողի համար կանխիկ վճարուի 5 սենթ։ 24է աւելի ու 48է պակաս տող ունեցող երգերու մէն մի տողին վճարել հարկ է չորս սենթ միայն։ Աւելի երկայն բանաստեղծութեանց համար զատ սար կարգութիւն կը լինի։ Իրաքանչիւր տեսը—8 երես— պիտի արժէ 3 սենթ ամէն մարդու համար։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

կը հրատարակուի առ այժմ ամէն շաբաթ օրեր իւր յատուկ տպարանէն, Թիւ 827 ու 829 Փալասէտ ավ. Վէսթ Հոպոքէն, Ն. Ճ.

—ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ—

Մ. Նահանգաց ու Քանատայի համար
Տարեկան մէկ տոլար
Ուրիշ երկիրներու համար՝
մէկ ու կէս տոլար

Թղթատարութեան ծախքը խմբագրութեան վրայէ։ Բաժանորդագիրն է կանխիկ վճարելի։ Ծանուցումներ կընդունուին գոհացուցիչ պայմաններով։

Նամակ կամ ծրար ղրկել հարկ է հետեւեալ հասցէին.

To The Editor of THE SOURHANTAG,
West Hoboken, N.J.
U. S. America.

THE SOURHANTAG
PUBLISHED EVERY SATURDAY
At No. 827-829 Palisade Ave.
West Hoboken, N. J.

TERMS TO SUBSCRIBERS, Free of Postage in the United States and Canada:
One copy, one year $1,00

Remittances made payable to and all communications addressed to The Editor of The Sourhantag, West Hoboken, N. J.

Entered at the Post-Office at West Hoboken as Second-Class Mail Matter.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Շարթուս մէջ եկող լուրերն ցաւալի են ընդհանրապէս. ուրախութիւն դէպքերն, ինչպէս միշտ, այս անգամ ալ աննշան են և սակաւաթիւ։ Մուսա պէկի տառապանքին մանրամասնութիւնը պարունակող Եւրոպական և նոյն իսկ Կ. Պոլսոյ թերթեր զայրոյթ կրնան պատճառել աշխարհիս ամենէ անտարբեր մարդուն անգամ։ Սուլթանն իր բարձր հովանին տարածած է մահկանացուաց այդ ստորնագոյնին վրայ, ու մարդարէի ներկայացուցիչներն ու զաւակներն / կը պաշտեն այդ եղեռնագործն՝ ի նախատինս քրիստոնէութեան և քրիստոնեայ հզօր պետութեանց։ Ինչպէս շատ դէպքերու, նոյնպէս և Մուսայի այս խնդրոյն մէջ Թուրք կառավարութիւնն իւր դատապարտելի ընթացքով ոչ թէ միայն Հայոց իրաւունքն կորզելով այդ դազանին տուած եղաւ, այլ ծիծաղելով նաև Եւրոպայի քթին՝ հայհոյեց անոնց, որք իրաւանց և քրիստոնէութեան պաշտպան կանգնելու պաշտօն ունին։ Բայց ցաւալի է որ այդ ազգերն փոխանակ զայրոյթ ցցելու՝ քիչ տարբերութեամբ՝ անտարբեր կը մնան։ Մեծ նախատինք մ'է անտարակոյս սոցա համար, որք աշխարհ կը կառավարեն իրենց խելքով, դրամով, ճարտարութեամբ ու մեծութեամբ, և կը ջիջանին դեռ տեսնել ի պաշտօնի մի ցեղ որ արդարութեան ոգւոյ թշնամին, ու քրիստոնէութեան ամենավատթար ոսոխն է։ Այո՛։ անպատուութիւն է իրենց համար կանգուն պահել տակաւին այն դահն որոյ ոտքերուն տակ արդարութիւնն ոգեւար կը հեծէ. հոն կը հոտի անբարոյականութիւնն՝ բառին ընդարձակագոյն նշանակութեամբ. հոն է անարդարութեան, ընդհանուր հալածանաց, դաղանութեան վարժարանն, և հոն է իրաւունք բռնարարելու մեծագոյն հանրարանն, որոց ընդհանուր տեսոչն է մոլեռանդ մի խելագար որ հակառակ բնական, քրիստոնէական և մարդկային օրինաց կ'ապրի անբարոյականութեան բովին մէջ։ Ամո՛թ եւրոպային, ամո՛թ քրիստոնեայ ազգաց որք կը հանդուրժեն դեռ պահել դաղանն գահուն հոտին մէջ, պատուել տալին ու դասել անարժանն արժանաւորաց կարգին մէջ։

— —

Մինչ ի Կ. Պոլիս, Եւրոպացւոց քթին տակ, դարուս մեծագոյն եղեռնագործներէն մին կը փայփայի Թուրք կառավարութեան կողմանէ, անդին գաւառներու մէջ ընդհանուր քրիստոնէից, մանաւանդ Հայոց իրաւունքն ու կեանքը թրքի ու քուրտի ոտից կոխան կը լինին։ Ամէն Հայ և ամէն մարդասէր անձ ի խոր խոցեցաւ անշուշտ երբ լսեց այն սոսկալի չարագործութիւններն որք պատմուած էին մեր թղթակցաց նամակներուն մէջ։ Ինչ կըզգայ մարդ երբ մէկ կողմէն կը լսէ թէ Տաճկաստանի մէջ բարբարոսք յղի կանանց փորը ճեղքելով սաղմերն դուրս կ'հանեն ու կը կորտեն զայնս իրենց մարց դիակներուն վերայ, և միւս կողմէն կը կարդայ տաճիկներու, մանաւանդ Սուլթանի անցուցած զեղխ ու մեծածախ կենաց նկարագիրն։ Հայն ի Հայաստան արեան օրերու մէջ կը չարչարուի, անդին մահմէտական տարրը անընկիւղ իր արարքներու մասին կը զուարճանայ անբարոյականութեան քաոսին մէջ Հայոց դրամովն։ Մէկ կողմէն արդար արիւնն կը թափուի մեր եղբարց, և միւս կողմէն հարստահարիչք իրենց չահաւակութեանց համար վարձատրութիւնս կ'ընդունին։

Ոչ միայն Հայը, այլ ամէն զգացում ունեցող ՄԱՐԴ պարտական է այս բարբարոսութեանց վերջ տալու համար ձանք չի խնայել, զի չարչար ուղղներն ՄԱՐԴԻԿ են։ Հերիք է որ Հայի արիւնն Մահմէտի ժողովրդին կեանք ու հանգիստ տայ. հերիք է որ Հայու քրտինքովն Մարգարէի յաջորդին ու իր հաբիւրաւոր կնիկ ներուն հաց և հանգիստ մատակարարուի...։

— —

Մավրօեանի պէս իւր դատն չ'սկսեցաւ տակաւին մեզ հետ, սակայն կը լսենք թէ քիչ օրէն, նոր տարիէ առաջ թերևս, դատարան պիտի հրաւիրէ եղեր զմեզ։ Կրթուի թէ Սուլթանի սիրելին իւր հրացանին համար բաւականէն աւելի վառօդ դիզելու եռեւէ է այժմ, որպէս զի մի անգամ պայթեցնէ զայն մեծ ձայն մը հանելով՝ խայտառակուելու, ծաղր ու ծանակ լինելու մեծ ձայն մը անշուշտ։ Իզուր է սակայն Բոյն դեսպանին համար իր բոլոր տաղանդով — եթէ ունի — զօրութեամբ ու ճիգով աշխատիլ ձիւնի պէս ճերմակ ներկայացնելու այն Թուրքը որոյ անունն հանքածուխէ աւելի սև է աշխարհի աչաց։ Նա պիտի կրնայ համոզել այն խելագար ներն միայն որք սեն ու ճերմակը իրարմէ զանազանելու չափ խելք ու դատողութիւն չունին, կամ այն իրենէ կոյրերն որք գոյներու վրայ գաղափար մը առած չեն երբէք։ Խելքէ երկայն մազեր ու անբանները պակաս բանականութիւն ունեցողներ միայն պիտի կրնան ձայնակցիլ և ըսել Մավրօեանի հետ թէ Թուրքն արդար է...։ Սակայն մեզ համար հանելուկ մ'է թէ Մավրօեանի որ՝ու միջոցաւ կը լսէ «Սուրհանդակ»ի գրածներն. ո՞վ է՝ որ զայնս կը թարգմանէ իրեն։ Իւր առաջին թարգմանն, Պ. Նորիկեան որ վերջերս պատուանշան ստացաւ և Բոյն կնկան մը հետ ամուսնացած է — որչափ որ գիտենք չըներ այդպիսի մի ստորին գործ, և մեզ կը մնայ հաւատալ թէ կայ վատ մը, կամ մանիչ մը որ յանձն առած է պաշտօններու ամենէն ստորինն։ «Սուրհանդակ»ի գրածներն դաղտնի չեն, և կը հասնին ամէն կողմ, բայց «վա՛յ անոր, որոյ ձեռքովը կը գործուի մատնութիւնն։»

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տիգրանակերտ և Վան պաշարման վիճակի մէջ դրուած են՝ այսինքն յանցաւորք պիտի դատուին զինուորական ատենի մը առջև։ Կը ծանուցուի նաև թէ ուրիշ գաւառներու մէջ ալ Նոյնպիսի ատեաններ պիտի կազմուին, որպէս զի աւելի լաւ կերպիւ ճնշուին Հայերն ու անոնց իրաւունքներն կորզուին։ Տարակոյս չկայ թէ այս խստութիւնք ո՛չ քիւրտերու և ո՛չ ալ Թուրքերու համար են որ տեղի կ'ունենան, այլ լոկ Հայոց և ընդհանուր քրիստոնեայ տարրին համար։ Ըրէ՛, Թուրք, ըրէ՛, այս ամէնուն փոխարէնն պիտի հատուցանես մի օր։

Շարթուս մէջ «Նիւ Եորք Հերալտ»ի մէջ հրատարակեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մուսա պէյ իր ընտանիքով Սուրիա պիտի աքսորուի։ Սա լուր չենք գիտեր որ աստիճանի ստուգութիւն ունի։ Անպարտ արձակեալ Մուսան աքսորել հանելուկ մ'է անշուշտ։

Նոյն լրագրի մէջ հրատարակեալ մի այլ Եւրոպական հեռագիր կը հաստատէ այն լուր թէ Ամերիկեան դեսպանն իկ. Պոլիս Մուսայի դատուիլն պիտի պահանջէ Միսիոնար մը սպանած լինելուն համար։ Սակայն ինչ պատիժ որ կրեց այդ դազան եղեռնագործն իր անթիւ ոճիրներուն համար, նոյնէն աւելի բան մը չի պիտի կրէ միսիոնար մը սպանած լինելու դատին մէջ։

Վերջի պահուս Եւրոպայէ առնուած լրագիրներն կը պատմեն թէ Տ. Կլատսթընի Դեկտ. 2ին Մանչէսթրի մէջ ըրած բանախօսութեան ներկայ գըտնուած են 4000 անձեր որոց մէջ կը գտնուին եղեր 150ի չափ երեսփոխաններ, ինչպէս Բառնէլ, Լօրտ Կրանվիլ, Բոչլերի և այլն և այլն։ Սա բանախօսութեան մէջ մեծ քաղաքագէտն աննման կերպիւ խօսած է Հայոց խնդրոյն և Թրքաց բարբարոսութեանց վրայ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Յառաջիկայ Յունվարէն ըսկսեալ շաբաթը երկու անգամ հրատարակուիլ պիտի սկսի նոյն ուղղութեամբ և նոյն դիրքով, բայց նոր և համակրելի անուամբ, նոր կարգադրութիւններով ու աւելի ճոխ պարունակութեամբ։

Բաժանորդագիրն պիտի լինի Մ. Նահանգաց համար 2 տոլար, և ուրիշ երկիրներու համար 2 ու կէս տոլար կանխիկ վճարելի՝ թղթատարութեան ծախքն մեր վրայ հաշուելով։

Այս առթիւ հարկ է ըսել թէ մեր այժմեան բաժանորդք մէյ մէկ տոլար ևս պարտին վճարել մինչ 1890 Դեկտ. վերջ թերթ ընդունելու համար։

Փոխադրութեան ու նոր կարգադրութեանց համար երկու շաբաթ թերթ չի պիտի հրատարակուի, որուն համար յոյս ունինք որ մեր ընթերցողք ներողամիտ կ'լինին։

Վստահ լինելով որ Հայ դաղթականութիւնն կը փութայ իւր ձեռնտուութիւնն ու օգնութիւնն հասցնել մեզ։

Մնամք աղդիս անձնուէր։

Խ. Ս.

Խմբագրութեանս հասցէն նոյնն է առայժմ։

Հայ դաղթականութեան կարգադիր Ցանձնախումբն ձայն չ'հաներ նորէն։ Սոքա կը քնանո՞ն նորէն։ Միթէ Հայ ժողովուրդն ընդհանուր նիստի հրաւիրելու լաւագոյն պատճառ մը կարե՞լի է գտնել, Մուսա պէկի խնդրին աւելի։ Ցարմարագոյն առիթն է կրաւոր ատենախօսութիւններով նկարագրել ժողովրդին այն անարդար դատաստան յորում մարմնացած կարելի է տեսնել անիրաւութիւնն Թրքական։ Ժողովուրդն չատ բան կսպասէ Ցանձնախմբէն, և եթէ այդ մարմինն անկարող է իր կոչման պատասխանել, լաւագոյն է որ հրաժարի ու ազատէ ինքզինքը ծանր պատասխանատուութենէ մը ապագային առջև, իսկ եթէ կարող է իւր պաշտօն կատարել ըստ արժանւոյն՝ ինչ որ յուսալի է՝ կը խնդրենք յանուն ժողովրդին չի թուլանալ և անգին ժամանակն չանցուցանել յումպէտս։

Մեր ընթերցողք մեծ օգուտ մը ըրած պիտի լինին լրագրոյս համար, եթէ իրենց գէպքի բաներն գնեն այն վաճառականներէ որոց ծանուցումներն ունինք. մանաւանդ որ սոքա լաւագոյն ապրանք ունին և աժան գիներ։ Ուէսթ Հոպոքէնի մէջ Պ. Փաթերսըն՝ հանքածուխի և փայտի վաճառականն ամենէն աժան գիներ ունի և լաւագոյն փայտ և ածուխ։ Կը յանձնարարենք զայն մեր մեր տեղւոյս ընթերցողաց՝ յուսալով որ իրենց գնումներն նոյն անձէ կընեն և կոգնեն ատով թէ՝ իրենց քսակին և թէ Սուրհանդակ լրագրին։

—Փրովիդենսէ Դեկտ. 10 թուականաւ կը գրեն թէ նոյն ամսոյ 7ը օրն տեղւոյն Հայոց ընկերութեան հրաւիրանօք պատուելի Կ. Բարակեան Փրովիդենս գնացած ու ատենախօսած է տեղւոյն Հայոց ընկերութեան ժողովոյն մէջ, ուր ներկայ եղած են տեղւոյն բոլոր Հայերն ու ծափահարութեամբ ընդունած են պատուելի ատենախօսն, որ խօսած է աւելի քան մէկ ժամ և լաւ տպաւորութիւն թողուցած է ներկայից վրայ։

—Փրովիդենսի Հայոց ընկերութիւնն ի պաշտօնէ կը ծանուցանէ թէ Մարսիլիոյ Հայրենասիրական Միութեան ի նպաստ հանդանակուած 100 տոլարն Դեկտ. 9ին յղած է Տ. Մ. Փորթուգալեանի։

—Մուսա պէկի դատին ներկայ գտնուած են օտար դեսպանաց թարգմաններն, բազմաթիւ լրագրաց թղթակիցներ ու կայսերական պալատէն երկու թիկնապահներ։ Նոյն դազանին դէմ վկայութիւն տուող երկու քահանաներու՝ պատիժ սպառնալով՝ երդումընել տուած է դատարանն՝ հակառակ մեր եկեղեցւոյ օրինաց։

Ուսթերլն 10 Դեկտ. թուականաւ կը գրեն։

«Բազաքիս Հայոց մէջ ստուար բազմութիւն մը կարդալով «Սուրհանդակ»ի մէջ Յունդաւան և Թրքապաշտ (երկու տարբեր բաներ որոնք՝ փայտի և երկաթի նման անկարելի է իմ ձուլել) Մավրօեանի՝ որդի Սուլթան Համիտի բժշկապետին, դատբանալու ծաղրելի սպառնալիքն, կ'երդնուն թէ՝ ոչ թէ միայն դատարան պիտի ներկայանան անձամբ վկայել հրէշ Թրքին դէմ, այլ և նիւթականապէս պիտի աջակցին դատարանական ծախուց երբ հասնի այդ երջանկաբեր օրն երբ Թուրքն ու իւր պաշտպանն կիսագնդիս ամենէ ազատամիտ ազգի (Ամերիկացւոց) առջև պիտի խայտառակուի «Սուրհանդակ»ի դէմ դատբանալու չափ վատութեան գիջած լինելուն պատճառաւ։ Օ՜ն ուրեմն հարուածէ որչափ կամիս. ամբողջ Հայութիւնն նեցուկ է քեզ, մի յուսահատիր՝ այլ ջանայ որ «փրք» «փրնչ» «ճրճ» և այլ զաւեշտական թերթեր տեղեկանան Մավրօեանի և իւր դատի մասին. մնացածը Աստուած ողորմած է. ատոնք կը լրացնեն ինչ որ մեզ անկարելի է։»

Վերջի պահուս հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մուշի մօտ խումբ մը Հայեր, մահմէտականաց կողմէն կատարուած սպանութեան մը վրէժխնդիր լինելու համար, մեծ խումբ մը քուրտերու վերայ յարձակելով ջարդս կոտոր ըրած են զայնս։ Այս վերջնոց օգնելու գնացող գունդը թրքական զօրքն ալ նոյն բաղդին արժանացեր է։ Հեռագիրն կը յաւելու թէ մեծ քանակութեամբ զօրք պիտի ղրկուի՝ իրը թէ խաղաղութիւնն հաստատելու համար։

Կեցցեն Հայ քաջեր...։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, Սեպտ. 25

Հաղբ.— Այս Նահանգի դըժբախտ ազգայնոց անտանելի վիճակի նկարագրութիւնն հետզհետէ եղած է արդէն։ Ինչպէս որ նախորդ տեղեկագրութեանց մէջ ծանուցուած է թէ՝ Նահանգի բռնապետ Սէվֆին պէկն ու հարստահարեալ ժողովրդի ներկայացուցիչներն Տիգրանակերտ կը գանուին դատուելու համար, բայց տեղական կառավարութեան անարդար ընթացից շնորհիւ փառօք կը պատուուի հարըստահարիչն ինչպէս որ Մուսա պէկն ի Պոլիս։ Հարստահարեալք ալ ձանձրացան ազերատգրել առկուսակալութիւնն և արդարութեան առեանի ընդհանուր դատախազն, որովհետև որչափ որ բողոք կը բարձրացնեն՝ այնքան Սէվֆին պէկի պատիւն կ'աւելնայ թէ կառավարութեանն թէ մահմետական երևելեաց քով, մինչդեռ իր չարագործութիւնք խմաց կը արուի առ որ անկ.։ Հոս յիշեալ բըռնաւորն հրապարակի մէջ նստած միջոցներուն, ճերմակ գլուխ սոփթաներ՝ փոխանակ բարեւելու գինքը, ձեռքը կը համբուրեն ու կանցնին, և այս ինչախատինս հայոց կը գործադրուի լռելեան։ Ըսել կուզեն թէ մեր հաճութեամբն բրած է բոլոր չարիքներն, մինչդեռ դուք բոլոր կը բառնաք իրեն դէմ։ Հարըստահարեալ ժողովուրդը իր քրանչան աշխատութեան վաստակն յումպէտս կը վատնէ ի պաշտպանութիւն դատին՝ զրկելով զինքն և իր զաւակունքն ու զիւր ընտանիքն օրապահիկէն։ Կառավարութիւնն արդարութեան ձայնին դէմ ականջ խցելով՝ քանի ամիսներէ ի վեր օրն իրուն կը դեգերցընէ զանանք կառավարութեան դուռն, ո՛չ հարստահարիչն դատի կ'ենթարկէ և ո՛չ հարստահարեալներուն ուղիղ պատասխան կուտայ, անոր համար ուրիշ օր առաջ խղճալիներն սարսուեցան հարիւրաւոր դահեկան ծախք ընել և հեռագրաւ բողոքել առ վեհափառ կայսրն, մեծ վեզիրն, արդարութեան նախարարն և Հայոց Պատրիարքն։ Կառավարութեան այս անարդար ընթացքէն կը մակարերի թէ թուրք կառավարութիւնն յաւուրկ նպատակ ունի զՀայ ազգն ջնջելու, ուստի կը հարկադրիմք մեր բողոքներ ներկայացնել Քրիստոնեայ տէրութեանց և թէ նոքա ևս լուռ մնան, անատեն ամբողջ ազգի մը կորստեան պատասխանատու պիտի մնան մեծ դատաւորին առջև։

Պէրիկ.— Քօրկցի Ալի Էօմէր և Զաթթոյէ Պասէ հարստահարիչներն հակակրութիւն ունենալով հայազգի հարուստ Քէլէշ և Թամոյ անուն անուն անձերու հետ, հինգ ամիս առաջ ութը քիւրտ աւազակներ կը զրկեն յիշեալ Քէլէշի ցանեցուցած արտին վրայ՝ զայն աւրելու համար։ Այս չարագործութեան միջոցին արտին տէրը վրայ կը հասնի իր եղբայր Խոյին հետ, որոյ վրայ թափելով աւազակներն կըսկսին անիրաւաբար խանչարով, պալթայով, մնաւ զարնել։ Խեղճ թէ եվրաւոր, բայց մահուան վտանգէն ազատելու համար՝ փախչիլ կըսկսի։ Աւազակները հրացան կը արձակեն ետեւէն, բայց գնտակն փոխանակ Խոյին, Զաթթոյի որդւոյ ոտքին կը դպչի։ Խոյ ինքզինքը գիւղն կը նետէ։ Սակայն Քօրկցի անկողմնակալ կարծեցեալ քանի մը անձինք կ'երթան խարէութեամբ կը բերեն Խոյն և կը յանձնեն Ալի Էօմէրին, որ իր տան մէջ շատ մը ծեծելէն վերջ զայն՝ կառավարութեան կը յանձնէ։ Իսկ քիւրտերն կը դիմեն վիրաւոր և ձերբակալեալ հայի տան վրայ, և որովհետև նորա ընտանիքն և զաւակունքն փախած էին նոյն գիւղէն, իր քոյրը Զարոն ձեռք կը ձգեն և կըսկսին անխղճարար ծեծել, որ հիւանդացնելով մի ամսի չափ անկողնոյ ծառայելէն վերջ՝ կը մեռնի։ Ասկէ զատ Թամոյի բոլոր տունը և արտերուն մէջ գտնուած հունձքերը կաւարեն, և Թամոն իրեններով այն օրէ ի վեր թափառական կը շրջի։ Դալով ձերբակալեալ Խոյին, Միւտիւրն 500 դահեկան առնելէ ղկնի, թէև հրամանագիր կուտայ իրեն տունը վերադառնալ, սակայն քիւրտերը կը դիմադրեն, ուստի զրկեալն կը խնդրէ Միւտիւրին որ իր ստացուածքն իրեն յանձնուի ու թող տրուի որ ընակութիւնը ուրիշ գիւղ մը փոխադրէ։ Սակայն հարստահարիչներու 1000 դահեկան կաշառի միջոցաւ զրկեալ և վիրաւորեալ Խոյն կը զրկուի քաղաքս, ու հոս բանտարկուած է երկու ամիսէ ի վեր՝ անծանօթ իր ազգէն։ Մօտերս եղբայրը Թամոն ատ գալով կառավարութեան դուռը գացած ու եկած միջոցին՝ խնդիրը ելեւէն ելաւ։ բայց ինչ օգուտ, օգնական չունի։ ասկից անկից պարաք ընելով թէև ասոր ոնոր ստակ կը կերցնէ, սակայն ուրիշ հայերու դատերուն պէս իրենալ տակաւին նկատողութեան առնուած չէ։

Նոյն Նահանգի Այքամի գիւղին ազգապետ՝ Մկրտիչ աղայի անդթաբար սպաննուելուն նկարագրութիւնն արդէն եղած է ժամանակին։ Իր հակառակորդներ ուզելով բոլորովին ոչնչացնել զիւր տուն, կը մտանեն Միւտիւրին նորա որդին Իսան իրը պարտական տէրութեան գանձին։ Քանի օր առաջ Միւտիւրն անձամբ եկաւ Տիգրանակերտ ու խնդիրն բերանացի յայտնեց Վսեմ. կուսակալին, որմէ ստատիկ հրաման մը առնելով՝ անմիջապէս վերադարձաւ Պէրիկ։ Տակաւին խմացած չենք թէ ինչ չարիքներ հասուցեր է յիշեալ ազգօգուտ, բայց անտէր հայի տան նկատմամբ։

1980 ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ 1890

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Դ. Տարի

«ՀԱՆԴԷՍ» Ամսագիրն կը բովանդակէ՝

1. Ուսումնական հատուածներ, ազգային հին և նոր գրականութեան, լեզուի, պատմութեան և այլն հետազօտութիւններ. Եւրոպացի հեղինակաց Հայ ազգին վրայ գրած յօդուածոց և գրոց ծանօթութիւններ և քննադատութիւններ։

2 Արուեստագիտական Յօդուածներ, արուեստական; առևտրական և տնտեսական ծանօթութիւններ։

3. Բարոյական Վէպեր։

4. Այլ եւ այլք, այն է՝ գիտնական աշխարհի նորանոր գիւտեր, տնտեսական և գիտնական նորագոյն մանր տեղեկութիւններ, և այլն։

5. Քաղաքական տեսութիւն, ամսոյ մը միջոցին քաղաքականութեան առած դրից համառօտ տեսութիւն։

«ՀԱՆԴԷՍԻ» Դ. Տարին շքեղ հրատարակութիւն պիտի ըլլայ, ազնուագոյն թղթոյ վրայ, վերնազարդով, զարդերով և զարդարագրերով։ Ծածկը կ'ըլլայ տպագրական նորագոյն գիւտերու համեմատ՝ գունատիպ պատկերով։

«ՀԱՆԴԷՍԻ» Դ. Տարւոյ բաժանորդք տարւոյն վերջը կ'ընդունին մէկ մէկ օրինակ նոր վէպ իրը յաւելուած։

Բաժանորդագինն է 8 Ֆրանք,— 4 ռուբլի թղթադրամ.—4 Ֆլորին։

Հասցէն՝

Redaction de la Revue HANTESS, VIENNE (Autriche)
VII, Mechitharisteng. 4.

ԽՄԲԱԳՐԱՏՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԷՍ»ի

ԹՐՔԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

ՄԱՀՀՄԵՏԱԿԱՆԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

Շար. եւ վերջ

Սակայն Մուսա պէյ հոս աւելի հիւր մ'է քան թէ մի յանցաւոր։ Պալատի մէջ մեծ պատիւներով կ'ընդունուի և զինքն դատապարտելու պաշտօն ունեցող դատաւորք յարգանօք կը վարուին իր հետ։ Պաշտպաններ ունի պալատին, Բ. Դրան ու պալատին մէջ և ամէն տեղ։ Մինչ Եւրոպական մամուլն կը պաշտպանէ Հայոց դատը, անգին հազարաւոր թղթեր կը հեռագրուին մայրաքաղաքէս ու բարբարոսական մահու կը դատապարտուին։ այս կարգին մէջ է նաև Միտատ փաշա։ Եթէ քանի մը քրիստոնեաներ այսպիսի վախճան մը ունեցած լինէին, Եւրոպան կրակ պիտի կորուէր, բայց երբ մահմետականն է զոհուողն ա՛չ ոքի սիրտ չի շարժիր։ Այնքան փաշա մեծ եպարքոս եղած տէն՝ օր մը խօսելով նոյն տեսնի Ֆրանսական Դեսպանին՝ Պ. Ֆուրնիէի հետ ըսաւ. «մեր քրիստոնեայ հպատակներն շատ երջանիկ են որք միշտ պաշտպան ունին իրենց մեծ տէրութեանց մէկին ներկայացուցիչն, բայց խեղճ մահմետականք ա՛չ օգ ունին։ Շատ կը փափաքէի որ Եւրոպան անխտիր պաշտպանէր մեր բոլոր ժողովուրդն։»

Մեր Եւրոպիոյ ներկայացուցիչք մեծաւ մասամբ աքսորեալի պէս են, ու չեն կարող Պոլիս ոտք կոխել։ Նոյն իսկ Մուխթար փաշա, կայսերական պատուիրակն ի Գահիրէ՝ անկարող է վերադարձ տեսնել Վսփորի ափունքը, որքան ոչ է Հայաստան։

Տարակոյս չ'կայ թէ նախարարները մինչև ատոմեան մը պիտի կրնային բարւոքել երկրին ներկայ վիճակն, եթէ Սուլթանն չի խառնուէր անոնց գործերուն, բայց նախարարք ունին իրենց առջև Սուլթանի կամոյ հակառակող անձերու օրինակն։ Հայաստանի արդի վիճակը վայրագ քիւրտ Մուսա պէկի բարբարոսութիւններն, զոյն դատելու խաղը, Սուլթանի անտարբերութիւնն ու հարստահարութեանց շարունակութիւն ի Հայաստան ուշ կամ շատ Եւրոպական միջամտութիւն մը յառաջ պիտի բերէ որով պիտի ստիպեն Սուլթանն բարեկարգել զիւր երկիր։ Ռուսիոյ համար Հայկական խնդիրն մի պատէհ ասիթ է, եթէ այդպիսի խնդիր մը բնաւ չի լինէր, նա պիտի ստեղծեր զայն։ Բայց Անգլիոյ համար ընդ հակառակն է, վասնզի նա բազմաթիւ հպատակ մահմետականներ ունենալով ի Հնդկաստան՝ շահ ունի Թուրքիոյ կանգուն մնալուն մէջ, և այս շահ կըստիպէ զինքն միջամտել, մանաւանդ որ Կիպրոսի զաշնագրութեամբ իրաւունք ունի միջամտելու։

Մուսա պէկի դատաստանն սկիզբ կրնայ լինել արմատական փոփոխութեան մը թրքաց դատական յուսի վարչութեան մէջ, եթէ մեծ տէրութեանց ներկայացուցիչներն ներկայ լինին քիւրտ աւազակապետի դատաստանին։ Այսպիսի մի գործ մեծ ընդունելութիւն կրնայ գտնել թէ քրիստոնէից և թէ մահմետականաց կողմէ, զի ամէնքն ալ արդարութիւն կուզեն։ Եւրոպան Սուլթանի կամքէն կախում ունեցող տաճիկ պաշտօնեայէ մը՝ ո՛և է արդարութիւն չի կրնար ակնկալել, ցորչափ ներկայացուցիչ մը չունի դատարանին մէջ։

ՍԱՍՈՒՆՑԻ

Պատիւ ունի ծանուցանել ազգոյ հասարակութեան թէ վերջերս Թուրքիէ հասնող իր զանազան ըմպելիքներն, թարմնպարներ, անուշեղէններն ևն. ամենայարմար և վայելուչ զարդերն կրնան լինիլ Նոր Տարւոյ և Ծննդեան առթիւ պատրաստուած սեղաններու։ Իր Գամանարայի գինին, Սոգղի մսաթիքան, սիրդը, վարդի օղին և Նանէի բախին չեն կրնար գերազանցուիլ։ Անոր զանազան տեսակ անուշներն, օշարակներն, թահին հալուան ու նամանաւանդ Հաճի Պէքիրի ծանօթ լոգումն իրենց նմանն չունին Մ. Նահանգաց մէջ։ Ամէն անձ տարակոյս չ'կայ թէ գնելու է զուտ ձիթաւոյղ, ընտիր ձիթապտուղ, Դաշարի պանիր, ձուկեղէն, ամէն տեսակ չոր պտուղներ, զանազան արմտիք, ծխախոտ, թէմպէքի ևն. ևն.

Տան առ հարիւր զեղչ կը լինի ցուցակի գներուն վրայ, երբ մեծ քանակութեամբ գնում տեղի ունենայ։

Մի մոռանաք թիւը. 59 Վաշինկթըն ըսթրիթ, Նիւ Եորք։ Մի՛ ուշանաք գնել. յիշեցէ՛ք Նոր Տարին և եկող ուրախութեան օրերն

1980 ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ 1890

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Դ. Տարի

«ՀԱՆԴԷՍ» Ամսագիրն կը բովանդակէ՝

1. Ուսումնական հատուածներ, ազգային հին և նոր գրականութեան, լեզուի, պատմութեան և այլն հետազօտութիւններ. Եւրոպացի հեղինակաց Հայ ազգին վրայ գրած յօդուածոց և գրոց ծանօթութիւններ և քննադատութիւններ։

2 Արուեստագիտական Յօդուածներ, արուեստական; առևտրական և տնտեսական ծանօթութիւններ։

3. Բարոյական Վէպեր։

4. Այլ եւ այլք, այն է՝ գիտնական աշխարհի նորանոր գիւտեր, տնտեսական և գիտնական նորագոյն մանր տեղեկութիւններ, և այլն։

5. Քաղաքական տեսութիւն, ամսոյ մը միջոցին քաղաքականութեան առած դրից համառօտ տեսութիւն։

«ՀԱՆԴԷՍԻ» Դ. Տարին շքեղ հրատարակութիւն պիտի ըլլայ, ազնուագոյն թղթոյ վրայ, վերնազարդով, զարդերով և զարդարագրերով։ Ծածկը կ'ըլլայ տպագրական նորագոյն գիւտերու համեմատ՝ գունատիպ պատկերով։

«ՀԱՆԴԷՍԻ» Դ. Տարւոյ բաժանորդք տարւոյն վերջը կ'ընդունին մէկ մէկ օրինակ նոր վէպ իրը յաւելուած։

Բաժանորդագինն է 8 Ֆրանք,— 4 ռուբլի թղթադրամ.—4 Ֆլորին։

Հասցէն՝

Redaction de la Revue HANTESS, VIENNE (Autriche)
VII, Mechitharisteng. 4.

ԽՄԲԱԳՐԱՏՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԷՍ»ի

Ֆ. ԷՇՈՒԱՊ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Գոհարներու, ժամացոյցերու և. և.

Ամէն տեսակ գոհարներ, ժամացոյցներ և խանդակի դիտակներ։ Ոչ մի գործարան տարակոյս չունի մեր գործարանի գերազանցութեան մասին։

Թիւ 431 Փալիսիտ Ավընիւ, Կրիֆիթ Հ
փողոցին մօտիկ
Ճէրզի Սիթի, Նիւ Ճէրզի։

ԱԶԳ

Մայր Հայաստանի և Հայ Թագաւորաց պատկերներն մեծ և ընտիր թուղթի վրայ միասին տպագրուած՝ կը վաճառուի խմբագրութեանս քով 50 սէնթի միայն։ Ցանձնարարութիւնք ճշտիւ կը կատարուին։ Գիներն կանխիկ են։ Թղթատարի ծախքն է ձրի։

ՐԻՇԱՐՏ Ֆ. ԿԱԼԳՐԷԹՀ

Ընդհանուր ճարդարար, հսրկց Նոտար, Գործակալութիւն

Հաստատուն կալուածոց և ապահովագրութ.
155 Քլինթըն ավ. Վ. Հոպոքըն, Ն. Ճ.
Սինտ ավ. ի և Քորթլնտ միջև
Տներ վարձու կ'տրուին և վարձեր կը հաւաքուին

ԳՆԵՑԼԻՔ

Հոգելոյ ս. ՆԵՐՍԷՍ Պատրիարքին Հ. ԱԼԻՇԱՆԻ պատկերներն որք կը վաճառուին Խմբագրութեանս քով։
ԳԻՆ ԻՐԱՔԱՆՉԻՐԻ 10 ՍԷՆԹ

— Կանխիկ —

Ֆ. Լ. ՊԷԼԹ

Վաճառական և շինող տեղական ու Հավանայի սիգարներու
Ամէն տեսակ գլանիկներ, ծխախոտ, ծամելախոտ ու ծխողաց յատուկ նիւթեր
460 Սէնթրըլ Ավ. Ճէրզի Սիթի Հայթս

Վէսթ Հոպոքընեան

ԱԾՈՒԽԻ ԵՒ ՓԱՅՏԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Կարմիր և ճերմակ մոխիր ունեցող ածուխ ամենաաժան գներով

Գրասենեան և վաճառատեղի

197 Քլինթըն Ավ.
Զէմպրս Փողոցի առջև
ՎԷՍԹ ՀՈՊՈՔՆ, Ն. Ճ.
Ճ. Փաֆրբրան — Տէր

ՉԱՌԼԷՍ Ֆ. ՄԻՆԹԸՐՆ

Օրէնսգէտ Փաստաբան
Թիւ 19 Նէսարք ըստ. Հոպոքըն, Ն-Ճ.
Գործի ժամեր — 9 ա. ժ. մինչ 6 ե. ժ.

ԱՐԵԳԱԿ

Շաբաթաթերթի հրատարակուած տասն և վեց թիւերն կը վաճառուին խմբագրութեանս քով կէս տոլարի միայն։ Փոսթի ծախքը ձրի է, իսկ գինը կանխիկ։

Հ. ՉԱՅԷՆՍ,

Dealer in Foreign & Domestic

Tea & Fancy Goods

337-9 CENTRAL AVENUE,
Cor. Lincoln Street, Jersey City Heights.

P. CHANKALIAN,

MERCHANT TAILOR.

455 Palisade Av. Bet. Griffith & Bower Sts.
Jersey City Heights, N. J.

ԴՐԹ. Մ. ԱԹԹԱՐԵԱՆ

644 Իսթ 6 րդ Փողոց, Նիւ Եորք
Հիւսանդ կընդունի
2 է մինչ 4 ե. ժ.

Ոչինչ կրնաս ընել լաւ
Քան գնել երկիր ու չինել տուներ

Յ'ԻՐԸՆԹԱԻՆ

Նիւ Ճէրզի

Սա 32 մղոն հեռի է Նիւ Եորքէ։ Երկու երկաթուղիք կանցնին անկէ։ ունի երկաթուղւոյ կայարան։ եւ է ամենէ առողջարար օդ ունեցող ու ծանօթ տեղերէն մին ՄԵԾ ՍԱՐՈՑԻՑ ԲԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ի Նիւ Ճէրզի։ Երեք մղոնի չափ հեռու է միայն Լօնկ Պրէնչէ և քառորդ մղոն ՄՕՆՄՈՒԹՀ ՓԱՌՔ ՐԷՑՍ ՔՕՐՍԷ։ 25 է մինչ 300 տոլարի տան յատուկ տեղեր կամ հոն ծախու, կանխիկ կան դիւրավճար։ ԼԻՑՔՎՈՒՏԷ 17 մղոն աւելի մօտ Նիւ Եորքի և ԵՕԹՆ մղոն՝ ծովեզրէն։ Օթեաններ, Եկեղեցիներ, Դպրոցներ, Գործարաններ, տուներ, և 3,000 բնակիչներ կան հոն արդէն։ Աւելի ընտիր տեղ կարելի չէ գտնել տուն չինելու համար։ Հոդերու գինն արագաբար կը բարձրանայ։

Դիմել

ԻԹԸՆԹԱՒՆ ԻՄԿՐՈՒՄՆԹ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, 111 Պրոտվէյ, Նիւ Եորք
կամ 35 մղնթ կոմբրի ըսգրիա, Ճէրզի Սիթի, և կամ ընկերութեան գործակալին, Հ. Էկինեանի, որմէ կարելի է լսել ամէն մանրամասնութիւն ու գը նել երկիր։

Ր. Փ. ԿՐԱՀԱՄ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Զարդարուն և ամէն տեսակ ապրանաց Թիրկներ, ասեղնագործեալ ապրանքներ, արանց և կանանց ճերմակեղէններ, ընդհանրապէս տան վերաբերեալ կտաւեղէններ և. և. և.
456 Սէնթրըլ Ավ. Ճէրզի Սիթի

— Սավթի և Քոնկրէսի միջև —

ԱԿԼԱԹԸՍ Ա. ՌԻՍԶ

Փաստարան

132 Քլինթընավընու,
Ուէսթ Հոպոքըն, Ն. Ճ.

ԱԶԳ

Հայերէն ամէն տեսակ կնիքներ և «բրպրը ըսթէմբներ ունենալ փափաքողներն կը հրաւիրուին դիմել Հ. Էկինեանի որ իր գներովն պիտի գոհացնէ յաճախորդները։

ԴՐԹ. Ս. Մ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

— 202 Վէսթ 23 րդ փողոց, Նիւ Եորք —
Հիւանդ կընդունի։
Առաւօտեան ժամը 9է մինչ 12
Եւ երեկոյեան ժամը 6է մինչ 7

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՑՆ

Կը վաճառուի խմբագրութեանս քով։ Գին 20 սէնթ կանխիկ։

ՃՕՆ Ֆ. ՀՈՒՓՓԸՐ

Վաճառական

Տան և տուն յարդարելու վերաբերեալ ամէն տեսակ երկաթեղէններ, վառարան, վառօդ, գնտեակ և. և.
— Միակ գործակալ —
Լօնկման և Մարթինէսի մաքուր ներկերուն, իւղերուն ու վերնիճներուն։
414 Սէնթրըլ Ավ. Ճէրզի Սիթի Հայթս
Նիւ Ճէրզի

Հայաստան լրագրի Խմբագրութեան կողմէ պատիւ ունինք ծանուցանել թէ նոյն թերթին բաժանորդագրուիլ փափաքողներ պարտին իրենց հասցէն ու բաժանորդագիրն յղել Սուրհանդակի Խմբագրութեան ու ստանալ անդորրագիր։

«Հայաստանի բաժանորդագիրն է երկուք ու կէս տոլար։

ՔԷՍԼԸՐ'Ս ՀՕԼ

324է մինչև 350 Սէնթրըլ Ավընիւ
Ճէրզի Սիթի Հայթս, Ն. Ճ.

Նուագահանդէս ամէն կիրակի օրեր
Երկու մեծ սրահներ և գաւառին ամենաշքեղ սենեակներն ժողովի և զուարճանաց համար։

Էրնսթ Ափփէլ — Տէր

Հաստատեալ ի 1868

ՎԻԼԻԱՄ ԿԸԼՏԸՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԿԱՐԱՍԵԱՑ, ԿՍՊԵՐՏԻՑ, ԱՆԿՈՂՆՈՑ

և.

81—83 Պէրկընլին Ավ.
ԹԻՆԻԷՆ Հիլ, Ն. Ճ. Լբվիս Փող. մօտ

ԴՐԹ. Զ. Փ. ԹԷՈԴՈՐԵԱՆ

249 Սաւթ Ֆորթ Ընտրթ
Հավվէյրրի մօտ.
ՊՐՈՒՔԼԻՆ, Ն. Ե.

Հիւանդ կընդունի

8էն մինչ 10 ա. ժ.
12 էն մինչ 2 ե. ժ.
6 էն մինչ 8 ե. ժ.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ
8էն մինչեւ 12

Թէլէֆոն քօլ 26 Վէլիամսպըրկ

Ճ. ՄԷՔԸՐ

Վաճառական

Ոտից ամաններու ու կոշիկներու Նոյնպէս «բրպրը» կոշիկներ ու ոտից ամաններ առ ձեռն

Ցանձնարարութիւնք ու վերանորոգումներն կը կատարուին լաւ խիստ լաւ կերպիւ

1142 Սրմիթ ավ. փափր փողոցի մօտ
Ճէրզի Սիթի Հայթս, Ն. Ճ.

Ֆ. ՓՕՐԹՍ

ԿԱՀԿԱՐԱՍԻՔ, ԱՆ ԿՈՂԻՆ, ԿԱՐԳԵՏԵՆ

89 և 83 Ուաշինկթն Ըստ-
ՀՈՊՈՔԸՆ, Ն. Ճ.

Կահկարասիք, կապերտ ևն կը վաճառուի շաբաթական վճարումներով։

Ամէն տեսակ կահ և ապրանք կը դնուի ի պահպանութիւն։

Լ. ՈՒՕԼՖ

Թիւ 443 ՓԱԼԻՍԻՏ ԱՎԸՆԻՒ
ՃԷՐԶԻ ՍԻԹԻ

— Պարզ և զարդարուն ապրանքներ —

Նոյնպէս ալարանց, երիտասարդաց և մանկանց մեծ քանակութեամբ և ընտիր

ՊԱՏՐԱՍՑ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Արանց յատուկ արդուզարդեր

ՄԻԱՑՆ ՄԷԿԳԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ԱԺԱՆ

Գործակալ տիկնանց տեղական հագուստներու տարազուց։

ԵԱԽՈՒ ՏՈՒՆԵՐ ԵՒ ՏԱՆՑ ՑԱՏՈՒԿ ԳԵՏԻՆՆԵՐ

Ինտիրն Ըսփրինկլանա լինկլուիւնը աժան գներով, դիւրավճար կամ շաբաթական վճարումներով, գազ և ջուր ունեցող ու սալայատակ փողոց ներու վերայ տներ և տանց համար յատուկ գետիններ կառաջարկէ վաճառելու համար։ Դիմել առ
Ս. Ր. ՍԻՄՍ

Ֆըրսթ Նէյշընալ պանք,
ՀՈՊՈՔԸՆ Ն. Ճ.

ԴՐԹ. ՃԻԼԻԼԻՍ ՓԻԹԸՐՍ

— Ատամնագործ Վիրաբոյժ —

983 Սըմիթ Ավ. Ճէրզի Սիթի
Կրիֆիթ Փողոցի անկիւնը

ՏԻԿԻՆ Պ. Մ. ՊԸՐՐ

ԴԱՍԱՏՈՒ

Գաղիարէն եւ անգղիարէն լեզուաց
Թիւ 3 Սուրրէլ Սգրիա.

Վէսթ Հոպոքըն Նիւ Ճէրզի

Telephon Call 61 A, Hoboken.

William R. Parslow.

UNDERTAKER.

99 Washington st. Hoboken, N. J.

Հ. ՊՐՈՒՔՆԸՐ

Զանազան ապրանքներ,
Շաքարեղէններ, պարզ և զարդարուն ապրանքներ,
ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ,
գլխարկ, խոյր, զգրոց ևն.
Թիւ 421 Սէնթրըլ ավ. Յավթի անկն.
Ճէրզի Սիթի Հայթս